№ 16 ԹԵՀՐԱՆ ՇԱԲԱԹ 16 ԱՊՐԻԼԻ 1894 № 16

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

# ՇԱՒԻՂ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

„ՇԱՒԻՂԸ“ ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» Տարեկան գինն 10 ղրան, կէս տարուանը 6 ղրան: Առանձին համարները 5 շահի. Արտասահմանում տարեկան 8 ֆրանկ կամ 3 րուբլի, կէս տարուանը 5 ֆր. կամ 2 րուբլի: Թեհրանումն գրւում են «Շաւիղի» խմբագրատան մէջ. Մեր հասցէն. Téhéran Rédaction ÇHAVIGH.

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է առաւօտեան 8—4 ժամին, Կիւրակէ եւ տօն օրերը 10—2 ժամը: Յայտարարութիւն ընդունւում է ամէն լեզուով: Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 1 շահի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Սալմաստ եւ Սավուջբուլաղ գաւառները. Նամակ խմբագրութեան. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, Ղարադաղ գաւառը:

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՍՈՒԼԴՈՒԶ ԵՒ ՍԱՎՈՒՋԲՈՒԼԱՂ ԳԱՒԱՌՆԵՐԸ

Մեզ համար մեծ ուրախութիւն է որ լոյս է տեսնում վերջապէս „Շաւիղ“ շաբաթաթերթը, որը այսօր բաց ճակատով ասպարէզ է դուրս եկել պաշտպանելու հասարակական ամեն մի ծանր, լուրջ ուշադրութեան արժանի հարց, թէեւ տեղի տայ սաստիկ բանակռուի: Մեզ համար ամենաուրախալին այն է, որ „Շաւիղը“ իւր մասնաւոր եւ յատուկ ուշադրութիւնը նուիրել է մեզ պարսկահայերիս կեանքին:

Ուստի մեծ համակրանքութիւն գտնելով, սոյն օրգանի միջոցաւ գրում եմ մի քանի հաստատութեանց, որոնք նպատակ ունին լոյս ու կրթութիւն տարածելու պարսկահայերի, մանաւանդ գիւղական մասի մէջ:

Հրաւիրում եմ նոցա ուշադրութիւնը Պարսկա-քրդստանի խուլ անկիւններում ընկած մի քանի հայաբնակ գիւղերի վերայ, որոնք տարիների ընթացքում զուրկ են մնացել ուսումնարանից, քահանայից ու ոչ է ազգային մի հաստատութիւնից: Մի ազգաբնակութիւն որ հասնում է մինչեւ 1900 հոգու Սուլդուզ և Սավուջբուլաղ գաւառներում, չէ ունեցել մինչեւ այսօր ոչ մի ազգային դպրոց, կանոնաւոր քահանայ և եկեղեցի: Եթէ ունեցել է քահանայ, թիւը երկուսից վեր չի բարձրացել, ինչպէս որ այժմ է: Բայց երկու հոգի քահանայ ինչպէս կարող են 17 գիւղացւոց գիւղերի, Սավուջբուլաղ քաղաքի և Միանդուաբ աւանի վերայ միանգամից վերահասութիւն յանել

17 գիւղից երեքը միայն ունին եկեղեցի, դրանց դռներն էլ գժբաղդաբար տարին 12 ամիս կապ են ու կապ:

Ցաւալի է ամեն կողմից նոցա դրութիւնը, նոքա չը գիտեն իրենց մայրենի լեզուն, խօսում են թրքերէն ու քրդերէն: Նրանց մեռելը թաղւում է առանց քահանայի, Զատիկ տօն օրերը անցնում են նոյնպէս առանց քահանայի, ուրեմն և իրենց կեանքում անհաղորդ են մնում Տիրոջ Ընթրիքին: Նիւթական սաստիկ անձուկ միջոցները մի կատարեալ խայտառակ քաօս են դարձրել նրանց ներքին ընտանեկան-տնտեսական վիճակը: Նիւթականի այդ խնամելի դրութիւնը յաճախ պահանջում է նրանց թողնել մայրենի կրօնը ընդունելու նիւննի կրօնքը: Այդ ցաւալի երեւոյթը մի սովորական բան է դարձել:

Իսկ տգիտութիւնն ու խաւարամտութիւնը պատել են նրանց մտքի ամբողջ հորիզոնը:

Այս ցաւալի իրողութիւնների յետոյ, մասնաւորապէս հրաւիրում եմ այդ կողմերի վերայ „Սէր“ ընկերութեան և թեմիս գործունեայ նորին սրբազնութիւն Ստեփաննոս Արքեպիսկոպոսի ուշադրութիւնը:

Թող չը մոռանան նոքա, որ այդպիսի տեղեր շատ լուրջ ուշադրութեան արժանի են:

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԳԻՒՂԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ
(Ղարադաղ Գաւառը)

Անա այս տեսակ Թուրքացածներից մի քանի տղամարդիկ եկել են Ղարադաղ եւ կրկին քրիստոնէացել են, նոցա ցեղը այժմ կայ: Զամբարցւոց կէսից աւելին եւ 7 տուն Ենգի-դիլայում նոյն ցեղից են:

Չորրորդ ցեղն են Բօշաները որոնք իրենց պապերից մնացած աւանդութեամբ պատմում են թէ իրանք Տաճկաստանից գաղթածներ են, ուրեմն դժուար չէ կարծել որ սրանք Րաֆֆիի պատմած Բօշաներից լինին որոնք այս կողմերում շատ դիւրութիւն են դտել ապրուստի եւ պանդխտացել են. պատմում են թէ իրենց պապերն առաջ Համադա: նումն են բնակուել, այնուհետեւ եկել են այստեղ:

Կայ Ղարադաղում նաեւ գաղթականների մի նոր խումբ, չմրմաճալցիք, որոնք 23 տարի սրանից առաջ 22 տնւորով Չարմահալը, իրենց հայրենիքը, թողնում գալիս են այստեղ, առաւել լաւ ապրելու համար, բերում են Սահամի սուլթանայի ձեռամբ որ նորանց բնակեցնում է Շահրիարի գիւղերում, որոնք վերաբերում էին յիշեալ անձին: Շատ կարճ ժամանակ անցնելուց յետոյ մեր գաղթականները զզւում են իրենց անտանելի ապրուստից եւ բոլորն ի միասին թողնելով այդ տեղը գալիս են Ղարադաղ, այնուհետեւ դրանցից մի մաս նորից վերադառնում են իրենց հայրենիքը, մի մաս մահով ոչնչանում են, մի մաս պանդխտանում են Թեհրանում, որոնց շարքերն է լինում Թեհրանում տարիներ վաճառական եղած այժմ հանգուցեալ տէր Յարութիւնը. այնպէս որ հիմայ այս գիւղերում կան միայն 5 տուն չարմահալցիք, որոնք իրենց հին բնաւորութեամբ ցոյց են տալիս թէ որչափ հիւրասէր, առաքինի բարեպաշտ եւ եկեղեցասէր ժողովուրդ են չարմահալցիք:

Ղարադաղցի հայերը բոլորը հարուստ են ասելով, աչքի առաջ ունիմ գիւղական հարստութիւնը, որովհետեւ նոքա ունին կթուներ, եզներ, գրաստներ եւ լաւ ցանք ունենալ: Հազիւ գտնուին իւրաքանչիւր գիւղում 2 տղայն որոնք մէկ բէշ նեղ անցնին, իսկ դրանց կողմից ամենահարուստը մէկ հոգի է, որ ունի մօտ 2 հազար Թուման եւ որը շատ խեղճ է ապրում եւ ցուրտ. մնացած հարուստներն ունին 100 Թուման, 60 Թուման եւ այդչափ որոնք միայն տոկոսով տալ գիտեն. ուրիշ կերպ չեն գործածում իրենց դրամագլուխը:

Շատեր ամենեւին փափաք չունին դրամով հարստանալու, որովհետեւ գոհ են իրենց գիւղական հարստութեամբ. բայց այժմ այսպիսիներ շատ քիչ են գտնւում որովհետեւ ինչպէս ասում են „Թեհրանի ճանապարհը ճանաչել են“: Նոքա տեսնում են Թեհրանում մարդիկ մաքուր հագուած կոկուած կարքերով պտտում են, ուտեն խմեն, հանգստութիւն ունին եւ այնպէս ջանանում են իրենք էլ շուտ հարստանալ, որպէսզի կամ գնան քաղաքում բնակուին եւ կամ նոյն իսկ գիւղերում քաղաքացիների նման վարուին:

Ամէն օր, ամեն խօսակցութեան մէջ խօսքները դէպի մեզ ուղղելով հարցնում են, „տէրացու ս

Հիմնուելով այն պարզ իրողութեան վերայ, որ իմ խօսակցութեան առթիւ ոմանք նոյն այդ կարծիքն էին յայտնել ժամանակին կայացած Հրապարակական մի ժողովի մէջ, ուր թերեւս ներկայ եղած լինի և հէնց ինքը պարոն լրատուն ու լսած իմ բացատրութիւնը:

Բայց քանի որ հարկ են համարել այդ առթիւ դիմել տպագրական խօսքին, ես էլ պարտք եմ սեպում համառօտակի առաջ բերել „անտակտ“ համարուած և դպրոցի „փակման պատճառ“ դարձած իմ խօսակցութիւնը, որի համար ձեր շաբաթաթերթի մօտակայ համարներից մի անկիւն եմ խնդրում յարգոյաբար:

Վարչութիւնը, որի անդամներից մէկն էլ ես եմ, ընդհանուր ժողով պէտք է կազմէր և ներկայացնէր իւր հաշիւները՝ առաջարկելով նոր ընտրութիւն: Գումարուելիք ժողովից մի քանի օր առաջ կիրակնօրեայ դպրոցի աշակերտները յայտնեցին ինձ, թէ ցանկանում են, որ նոր կազմակերպուելիք վարչութեան մէջ իրանցից էլ մտնեն:

Շատ լաւ, ասացի, ուրախալի է այդ և նպատակայարմար. ձեզնից մի քանիսը վարչութեան մէջ լինելով՝ շարունակ, որպէս գործին ի մօտոյ տեղեակ, կը ներկայացնեն դպրոցի անհրաժեշտ կարիքներն և աշակերտների իրաւացի պահանջները, միւս կողմից էլ գործի ընթացքն ու վարչութեան կարգադրութիւնները պարբերաբար կը հաղորդեն իրանց ընկերներին և այսպիսով նպաստած կը լինին երկուստէք սերտ յարաբերութեան: Բայց որովհետեւ աշակերտներից ոչ ոք ընկերութեան անդամ չէ, յաւեցի ես, ուրեմն և չեն կարող ընտրողական ձայն ունենալ, ուստի լաւ կանէք լաւ իս, եթէ չէք ուզում անդամ գրուել, դուք ձեր միջից ընտրէք 2—3 հոգի և մեզ տաք նրանց անունները, իսկ այնուհետեւ մենք կառաջարկենք ընդհանուր ժողովին ձեր ընտրելիները և ըստ կարելուն կը պաշտպանենք նրանց ընտրելիութեան:

Սա է ամբողջ եղելութիւնը, որից կիրակնօրեայ դպրոցի յառաջադիմութեան նախանձախնդիրները հետեւցնում են, թէ աշակերտներին անիրաւաբար զրկել եմ ձայնից...., մինչդեռ իմ արտայայտածը եղել է լոկ անհատական կարծիք՝ հիմնուած ընկերութիւններից առհասարակ ընդունուած օրէնքների վերայ. բայց և այնպէս, նոյն անվճար անդամակցութիւնը գտնելով վարչութեան իրաւասութեան շրջանակից դուրս՝ այդ խնդրի լուծումը թողել եմ ընդհանուր ժողովի որոշման և այդպէս էլ հաղորդել իրանց. իսկ ընդհանուր ժողով տակաւին չէ կայացել, չը նայելով որ արդէն չորս անգամ ցրուած են հրաւիրագրեր, որոնցից առաջինը դեռ անցեալ տարուայ դեկտեմբերի 24-ին էր:

Ահա իմ ամբողջ խօսակցութիւնը, որը՝ որ լրատուի կարծիքով, անտակտ է և իբր պատճառ այդ դպրոցի փակման: Բայց ափսոս, որ „Շաւիղ„ սուղ էջերը թոյլ չեն տալիս ինձ, որպէս սկզբից մինչ այսօր վարչութեան անդամի և երկու տարի անընդհատ այդ ուսումնարանում դասատուի, առաջ բերել նոյն դպրոցի գոյութեան երկար պատմութիւնը, որից պարզապէս պիտի երեւար անաջողութեան բուն պատճառը և լուսաբանէր վայր ի վերոյ կազմած սխալ կարծիքները:

Ընդունեցէք յարգանաց հաւաստիքը, վարչութեան անդամ Նիկողայոս տէր Յովհաննեսեան:

---

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Դավրէժի մեր թղթակիցը հաղորդում է հետեւեալը: Ապրիլ 3-ին կայացաւ առաջնորդարանի դահլիճում նախագահութեամբ Սուքիաս արքեպիսկոպոս Պարգեւեանցի, հայոց կրթական Սէր ընկերութեան ընդհանուր ժողովը. անդամներից ներկայ էին միայն 12 հոգի, իսկ միւսները քաղաքումս չը լինելու պատճառով չէին կարողացել ներկայ գտնուիլ: Ժողովի առարկաներն էին՝ 1) 1892—94 թուականի բարոյական և տնտեսական հաշիւը 2) կանոնագրութեան վերաքննութիւնը, 3) վերընտրութիւն վարչական անդամների կազմութեան մէջ և վերստուգիչ յանձնախմբի ընտրութիւն: Բարոյական հաշուից երեւաց, որ ընկերութիւնը երկու տարի պահել է մի ուսուցիչ Սալմաստի Մահլամ գիւղում և իւր կարողութեան համեմատ օգնել է փոքրիկ նպաստներով մի քանի կրթական հիմնարկութիւններ: Ներկայ եղողները բոլորն էլ անդամ գրուեցան, որոնցից հինգ հոգի ձայների առաւելութեամբ ընտրուեցան վերստուգիչ յանձնաժողովի համար, նրանց պաշտօն է վերաքննել հաշիւը և կանոնագրութիւնը:

—

Ուշակից մեզ հաղորդում են հետեւեալը: Ն. Վ. Շահի եղբայրը, որ նշանակուած էր Ուշակի քաղաքապետ, ամսոյս 3-ին հասաւ, մեծ բազմութիւն էր հաւաքուել քաղաքի դուրսը: Կային նաև 30-աչափ հայեր, որոնք դիմաւորել էին: Քաղաքապետը պալատը հասնելուն պէս՝ թնդանօթը աւետեց ժողովրդին նորա բարի գալուստը, որից յետոյ կարդացուեց կայսերական հրովարտակը:

—

Ուրախութեամբ ծանուցանում ենք որ պ. Յովսէփ Միրզայեանցի աշխատու-

---

Թող փնտռէ „Արմէնիայի“ 1892 թուի թերթերը (չեմ յիշում որ թիւը) եւ կը գտնէ Ղարադաղի վերայ մի յօդուած, որի մէջ գրուած են միայն Ղարադաղի տպաւորութիւնները: Այս յօդուածը բաւական վիրաւորական է եղել ղարադաղցոց համար, չը նայելով որ հանգուցեալն այդ յօդուածը գրելու շարժառիթը յայտնում է իւր վերջաբանի մէջ, որով խնդրում է սրբազան Առաջնորդից ուշադրութիւն դարձնել Ղարադաղի պատող խաւարի վերայ եւ նոցա խեղճ վիճակի լուսաւորութեան մասին, բայց սրբազան Հայրը զարմանալի է թէ ինչ պատճառով դեռ եւս ուշադրութիւն չէ դարձրել այս բանի վերայ:

Ինչ եւ իցէ այդ յօդուածը բաւական վիրաւորական եղաւ Ղարադաղի համար. մարդիկ չեն հասկանում թէ ինչու այն անձը, որին իրանք այնչափ սիրում եւ յարգում էին պէտք է խայտառակէր նոցա լրագրով: Այդ միեւնոյն վախը սրանց սրտում մնացել է, այնպէս որ Ղարադաղ հասնելուս միւս օրը երբ սկսեցի նկարել գիւղերը, թաղացիների փափքները եւ ուսումնարանի մասին ունեցած գաղափարները քննելու համար, ինձ ընկերացան տեղւոյս ամենանշանաւոր անձերից երկուսը. մէկը հեղինակութիւն ունի որովհետեւ հայր տէր Յովհաննէսի անդրանիկ որդին է եւ տիրացու. իսկ միւսը որովհետեւ Ղարադաղի բժիշկն է որը հազիւ 2 ամիսը մի անգամ գեղ է դուրս տալիս: Սոքա ինձ շարունակ խրատում էին եւ ճանապարհներ էին ցոյց տալիս իմ գործի մասին, եւ այդպիսով կամաց կամաց խօսքը ձգեցին հանգուցեալի յօդուածի վերայ, խօսքը վերջացնելով հետեւեալ բառերով, „որովհետեւ քաղաքից մեր բարեկամները սկսեցին մեզ նախատել թէ ինչու այդ տեսակ մարդկանց դուք հիւրասիրում էք որ վերջն այդ կերպով խայտառակեն ձեզ, մենք էլ հիմա ուխտել ենք մինչեւ մեզ համար նշան վկայականի վերայ կատարելապէս անկեղծութիւն եւ համեստութիւն չը լսենք ձեզանից, էլ չենք ընդունել“:

Իսկ երբ ղարադաղցիք զգացել էին իմ մասին հարց ու փորձ անել, նորա անկեղծութիւն էին ասացել որպէս թէ ես եկել եմ այստեղ քաղաքական միսիոնարների կողմից? Ես էլ դժբաղդաբար Թէհրան գտնուած ժամանակս, անկեղծութիւն չունէի որ Ղարադաղի առաջնորդական տեղապահ տէր Խաչիկ հայրն է, ապա թէ ոչ անձամբ կը գնէի նորան եւ նորանից կը ցանկայի, որով անհիմն չէր մնալ այդ թիւրիմացութեան. բայց իմ էլ մեղքը չէ նշանակում որ եմ ուղարկուած եմ քաղաքականների կողմից: Յուսով եմ որ սրբազան Առաջնորդը կը բարեհաճէ օգնել մեր գործին, եւ կը համոզէ որ այս նպատակները եւ ջանքերը վտանգի ենթարկութեան արժանի չեն:

(Կը շարունակուի)

